ԱՅԼ ԿԵՐՊԻԿ

Խաղում ենք հայերեն

ԻՆՉ Է «ԱՅԼԿԵՐՊԻԿ»-Ը

Թիմային ինտելեկտուալ խաղ՝ նախատեսված տարբեր տարիքային խմբերի համար: Տուփում առկա քարտերը երկկողմանի են՝ նկարներով և բառերով:

ՏՈՒՓԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.

- **200** երկկողմանի քարտ,
- **1** ավազի ժամացույց (մեկ րոպե),
- խաղի կանոնները մեկնաբանող թերթիկ,
- **1** նոթատետր (հաշիվը գրանցելու համար):

Նկարներով քարտեր՝ **4**-ից **8** տարեկան երեխաների համար, որոնցից յուրաքանչյուրի վրա **2** նկար է:

Բառերով քարտեր՝ **8**-ից **14** տարեկան երեխաների համար, որոնցից յուրաքանչյուրի վրա **4** բառ է:

Մասնակիցների նվազագույն թիվը՝ **4**, (երկու թիմ՝ երկուական մասնակցով), առավելագույնը՝ որքան ցանկանում եք ☺:

ԻՆՉՊԵՍ ԽԱՂԱԼ

Խաղը սկսելու իրավունքը որոշվում է **«Այլ կերպ»**-ի ավանդական եղանակով՝ «չինգաչունգ անելով» կամ «ոտք գցելով»:

Թիմի անդամներից մեկը քաշում է քարտը, ժամացույցը պտտվում է, և թիմակիցներին բացատրում է քարտի վրա պատկերված նկարները կամ գրված բառերը:

Առաջադրանքը կատարելու համար տրվում է **մեկ րոպե**, որը հաշվվում է ավազի ժամացույցի միջոցով:

Յուրաքանչյուր գուշակած նկարը կամ բառը մեկ միավոր է:

Եթե հաջողվում է բացատրել քարտի բոլոր նկարները կամ բառերը, իսկ ժամացույցի ավազը դեռ չի սպառվել, մասնակիցն իրավունք ունի հաջորդ քարտը վերցնել:

- ✓ Կարելի է բացատրել հոմանիշներով կամ հականիշներով. օրինակ՝ *«ԸՆԿՈՒՅԶ»* բառը բացատրելիս կարելի է ասել՝ *«պոպոքը այլ կերպ ի՞նչ ենք ասում»*, *«ԲԱՐՁՐ»* բառը բացատրելիս կարելի է ասել՝ *«ցածրի հականիշը»*:
- ✓ Կարելի է բացատրել զգացողությունների միջոցով, նկարագրել իրավիճակ և այլն.
- ✓ Թույլատրվում է բացատրելիս կիրառել ժեստեր, դիմախաղ և ձայներ*:
- ✓ Չի թույլատրվում օգտագործել նույնարմատ բառեր, թարգմանություններ կամ մատնացույց անել տվյալ իրը:
- ✓ Չի թույլատրվում բացատրել բառերը տառ առ տառ կամ նշել տառերի քանակը բառում:
- ✓ Բացատրելիս կարելի է խոսել որքան ցանկանում եք, քանի դեռ թիմակիցները փորձում են գուշակել, բացատրողն ընթացքում նորանոր հուշումներ է տալիս:
- ✓ Բացատրելիս քարտի վրա գրված բառերի հերթականությունը պահպանելը պարտադիր չէ:

Հակառակորդ թիմը ուշի-ուշով պետք է հետևի ավազի ժամացույցին, իսկ որևէ մեկը կարող է հետևել բացատրող մասնակցին, որպեսզի նա չխախտի խաղի կանոնները:
Ժամանակը սպառվելուց հետո, գրանցվում են միավորները, և հերթը անցնում է մյուս թիմին:
Բացատրված քարտերը մի կողմ են դրվում, որպեսզի միևնույն խաղի ընթացքում չկրկնվեն:
Թիմերը խաղում են հերթով, թիմի անդամները ևս բացատրում են հերթականությամբ:
Խաղի տևողությունը որոշում են մասնակիցները. օրինակ՝ կարող են պայմանավորվել, որ խաղում են այնքան, մինչև թիմերի բոլոր անդամները 4 անգամ բացատրելու հերթ ստանան:

** Եթե երեխաները դժվարանում են, խաղը կազմակերպողները կարող են նախապես որոշել, որ կարելի է բացատրել նաև ժեստերի, դիմախաղի կամ ձայների միջոցով (օրինակ, եթե պատկերված է շուն, կարելի է «հաֆ-հաֆ» անել, եթե պատկերված է բաժակ, կարելի է ձեռքերով երևակայական բաժակ ցույց տալ:) Փոքրիկներին ոգևորելու համար կարելի է կազմակերպել խաղը ծնողների (ավագ սերնդի ներկայացուցիչների) հետ համատեղ:*

ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ